ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՏԵՂԵԿԱԳԻՐ
ИЗВЕСТИЯ АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
Հասարակական գիտություններ № 5, 1958 Общественные науки

ՄԱՐՔՍ ԵՎ ՄԱՐՔՍԻԶՄ

(Կ. Մարքսի ծննդյան 140-ամյակի առթիվ)

Առաջավոր մարդկությունը մայիս ամսին նշեց մեծ ռևոլյուցիոներ և գիտնական, գիտական կոմունիզմի հիմնադիր, միջազգային պրոլետարիատի առաջնորդ և ուսուցիչ Կարլ Մարքսի ծննդյան 140-ամյակը։ Իր հանճարեղ միտքն ու մեծ սիրտը Մարքսը ամբողջապես նվիրաբերեց աշխատավոր մարդկություն ճնշման ու շահագործման բոլոր ձևերից ազատագրելու ազնիվ գործին։ Ոչ մի դժվարության առաջ չնահանջեց Մարքսն իր այդ վեհ նպատակի ճանապարհին։ Բազմաթիվ հակառակորդների ու թշնամիների թունոտ սլաքների տարափի միջով վստահ ու հպարտ ընթանում էր նա դեպի առաջ։ Որպես պրոլետարիատի Պրոմեթևս նա ճակատամարտի մեջ մտավ բոլոր հին աստվածների ու կուռքերի, բոլոր չար ուժերի դեմ՝ հանուն կոմունիզմի։

Հերոսական ջանքերով Մարքսը իր ջերմ բարեկամ և հավատարիմ զինակից Ֆ. Էնգելսի հետ միասին մշակեց կոմունիզմի թեորիան, ծրագիրը, տակտիկան։ Եվ մշակեց ոչ թե «մաքուր գիտության» տաճարում, այլող հարցերից սխոլաստիկայի հաստ կամարներով անջատված մենաստանում, այլ ակտիվ հասարակական-քաղաքական գործունեության, ռևոլյուցիոն պայքարի թոհ ու բոհի թեժ խառնարանում։ Մարքսն ու Էնգելսը գլխավորում, հորդորում, ոգևորում էին XIX դարի բոլոր նշանակալից բանվորական ելույթները։ Մարքսիզմը ծագել, ձևավորվել, զարգացել է ամբողջ աշխարհի պրոլետարների ռևոլյուցիոն ազատագրական շարժման հողի վրա, արտահայտելով այդ շարժման արմատական շահերն ու վերջնական նպատակները, անհաշտ մարտնչելով նրա բոլոր հակառակորդների դեմ։ «Ձեր պատկերացումը երջանկության մասին»— հարցրել են Մարքսին. «Պայքար»—եղել է պատասխանը։ Բնութագրելով Մարքսի կերպարը, Էնգելսը նշում է, որ Մարքսը նախ և առաջ պրոլետարական ռևոլյուցիոներ էր, իսկ դրա հետ միասին՝ գիտության կորիֆեյ։

Հարյուր տարուց ավելի է, ինչ Մարքսի ուսմունքը հաղթականորեն հանդիսաքայլում է երկրի վրա։ Նրանով զինված կոմունիստական ու բանվորական պարտիաները նոր ուղիներ հարթեցին համաշխարհային պատմության մեջ։ Մարքսիզմի թեորիայի ու տակտիկայի գրանդիոզ հաստատումը հանդիսացավ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան, որով սկսվեց կապիտալիզմի փլուզման և սոցիալիզմի հաստատման դարագլուխը։ Մարքս-լենինյան պարտիաների ղեկավարությամբ մոտ մեկ միլիարդ մարդ սոցիալիզմ-կոմունիզմ են կառուցում։ Սոցիալիզմը դարձել է համաշխարհային սիստեմ և անշեղ վերելք է ապրում կյանքի բոլոր ոլորտներում այն ժամանակ, երբ կապիտալիզմի գոտին խիստ նեղացել է և նա նոր սոցիալական ցնցումների հանդեպ է կանգնած։

Ո՞րն է Մարքսի ստեղծած ուսմունքի էությունը, ուժն ու բովանդակությունը։ Մարքսիզմը ստեղծվել է XIX դարի 40-ական թվականներին։ Դա Եվրոպայի պատմության մեջ շրջադարձային էպոխա էր։ Անգլիայում, Ֆրան-

սիայում, Նիդերլանդներում կապիտալիզմը հիմնականում հաղթանակ տանելով ֆեոդալիզմի դեմ, արագորեն գնում էր դեպի իր ծաղկումը։ Բանվոր դասակարգը հասարակական-քաղաքական լուրջ ուժ էր դարձել. դրա փայլուն ապացույցներն էին Լիոնի ապստամբությունը Ֆրանսիայում (1831), տարիներ տևող չարտիստական շարժումը Անգլիայում, ջուլհակների ապստամբությունը Գերմանիայում։ Որպես բողոք կապիտալիստական շահագործման դեմ՝ հանդես էին եկել զանազան սոցիալիստական շարժումներ և ուսմունքներ։ Ռևոլյուցիոն շարժումների և սոցիալական հակասությունների կենտրոնը Անգլիայից ու Ֆրանսիայից փոխադրվել էր Գերմանիա. վերջինս ապրում էր ռևոլյուցիոն փոթորիկների նախօրյակը։ Ընդ որում, ռևոլյուցիան այստեղ կատարվելու էր հասարակական-քաղաքական և գաղափարական ավելի հասունացած պայմաններում (Եվրոպայի մասշտաբով), քան այդ կար Ֆրանսիական ու անգլիական ռևոլյուցիաների ժամանակ։ Սակայն բանվորական շարժումը և սոցիալիզմը ընթանում էին իրարից անջատ. դա ուտոպիական սոցիալիզմ էր, քանի որ բանվորական շարժման հետ չէր միացված. այն պետք է միացվեր բանվորական շարժման հետ։ Պատմական այդ մեծ խնդիրը լուծեցին Մարքսն ու Էնգելսը և դրանով իսկ նրանք նոր դարագլուխ բաց արին սոցիալիզմի պատմության մեջ։ Նրանք հսկայական գործունեություն ծավալեցին պրոլետարիատին կազմակերպելու և ինքնագիտակցության բերելու։ Ուտոպիայի փոխարեն նրանք հիմնադրեցին գիտական սոցիալիզմը։

Մարքսը բուն կապիտալիստական արտադրաեղանակի ընդերքում, հանձինս բանվոր դասակարգի, գտավ այն ուժը, որն ընդունակ է և իր կենսապայմանների շնորհիվ կոչված է իրագործելու հասարակության կոմունիստական վերափոխումը։ Մարքսից առաջ ուտոպիստ սոցիալիստները նույնպես տեսնում էին բանվոր դասակարգի թշվառ վիճակը։ Սակայն նրանք պրոլետարիատի վրա նայում էին որպես սոսկ տառապող պասսիվ մի զանգվածի, կամ նույնիսկ համարում էին նրան սոցիալական խոց, չարիք։ Նրանք կարեկցում էին աշխատավորներին, նույն թվում և պրոլետարիատին, բայց նրանք չէին տեսնում վերջինիս ուժն ու հնարավորությունները, չէին ընդունում նրա ինքնուրույն դասակարգային ռևոլյուցիոն պայքարի և իշխող դասակարգ դառնալու անհրաժեշտությունը։ Մարքսն ու Էնգելսը առաջինն էին, որ ըստ էության, հայտնագործեցին բանվոր դասակարգին։ Նրանք գիտականորեն հիմնավորեցին պրոլետարիատի համաշխարհային-պատմական դերն ու անելիքները որպես կապիտալիզմի խորտակողի և կոմունիզմի կառուցողի։ Եվ այս գաղափարին Մարքսը հանգեց ոչ թե պատահականորեն, սոսկ բարոյական զգացմունքներից դրդված։

Սոցիալիզմը պրոլետարիատի հետ միացնելու մտքին Մարքսը հանգեց հենց իր առաջին մարքսիստական գրվածքում՝ «Հեգելի իրավափիլիսոփայության քննադատությունը» (1844) հոդվածում։ Այստեղ առաջին անգամ Մարքսը ձևակերպեց իր մատերիալիստական աշխարհայացքի հիմքերը, անխնա քննադատության ենթարկեց Գերմանիայի կիսաֆեոդալական, պրուսա-միապետական ռեակցիոն կարգերը, բյուրոկրատիզմը, կալվածատերերի կամայականությունները։ Այստեղ է Մարքսը հռչակել իր այն թեզը, թե փիլիսոփայությունը հանձինս պրոլետարիատի գտնում է իր նյութական կրողին, իսկ պրոլետարիատը փիլիսոփայության մեջ տեսնում էր իր հոգևոր զենքը։ Պետք է քննադատության ենթարկել տիրող կարգերի զենքը և պետք է քննադատել զենքով։ Նյութական իրականությունը նյութական միջոցներով պետք է փոխել։ Սա միան-

դամայն նոր ըմբռնում էր թե պրոլետարիատի պատմական դերի, և թե փիլիսոփայության։

Պրոլետարիատի պատմական մեծ դերի գաղափարը, ինչպես բազմիցս ընդգծում է մեր դարաշրջանի մեծագույն մարքսիստ Լենինը, մարքսիզմի մեջ գլխավորն ու հիմնականն է։ Պրոլետարիատը, ըստ Մարքսի, կոմունիզմի ինտելեկտուալ և բարոյական կրողն է, նրա ֆիզիկական իրագործողը։

Սոցիալիստներն իրենց իդեալը իրագործելու համար պետք է դիմեն բանվոր դասակարգին, նրա վրա հենվեն, նրան կազմակերպեն, գլխավորեն նրա պատմական ստեղծագործությունը։ Պրոլետարիատը կարող է և պետք է ինքն իրեն ազատագրի, կատարելով սոցիալիստական վերափոխումներ, իր ձեռքը վերցնելով քաղաքական իշխանությունը, հաստատելով պրոլետարիատի դիկտատուրա, իրեն միացնելով աշխատավորների բազմամիլիոն մասսաները։ Այդ նա կարող է անել, որովհետև նա զուրկ է արտադրության միջոցներից, համախմբված է կապիտալիստական խոշոր արտադրության մեջ և անխնա շահագործվում է կապիտալի կողմից։ Պրոլետարիատը կապիտալիստական արտադրության զարգացմանը զուգընթաց աճում և հզորանում է, գործադուլային ու քաղաքական պայքարում կոփվում, քաղաքական լուրջ ուժ է դառնում։ Մարքսն ու Էնգելսը բանվոր դասակարգին զինեցին իր խնդիրների գիտակցությամբ, հսկայական աշխատանք ծավալեցին ստեղծելու նրա համար քաղաքական ավանգարդ Կոմունիստական պարտիա, մշակեցին նրա շարժման թեորիան, ծրագիրը, տակտիկան։ Պրոլետարիատը, ասում է Մարքսը, պետք է ձեռք բերի քաղաքական իշխանություն, այսինքն հաստատի դիկտատուրա և այն օգտագործի արտադրության միջոցները սոցիալիստական սեփականություն դարձնելու, շահագործումը ոչնչացնելու, նյութական և հոգևոր բարիքները աշխատավորների տրամադրության տակ դնելու, կոմունիզմ կառուցելու համար։ Պրոլետարիատի առաջնորդների ու թեորետիկների խնդիրն է բացահայտել նրա շարժման ընթացքը, բովանդակությունն ու պայմանները, տալ նրա պայքարի լոզունգներ, գլխավորել այդ պայքարը։ Մի երկու խոսքով, ասում է Լենինը, Մարքսի և Էնգելսի ծառայությունը բանվոր դասակարգի հանդեպ այն է, որ նրանք սովորեցրին բանվոր դասակարգին ինքնաճանաչողություն, ինքնագիտակցություն և երազանքների տեղը դրեցին գիտությունը։

Կարլ Մարքսը գիտական կոմունիզմի հիմնադիրն է և գիտության մեծագույն կորիֆեյը։ Նա իր մեջ միացնում էր աննկուն ռևոլյուցիոների և խորագույն գիտնականի գծերը։ Ընդ որում նա արհամարհանքով էր խոսում այն մարդկանց մասին, ովքեր գիտության վրա նայում էին որպես ինքնանպատակի կամ անհատական փառամոլության ու հարստության միջոցի։ Ռևոլյուցիոն մարտիկ և հզոր գիտնական Մարքսը մարդու գործունեության երկու կողմը (հասարակական-քաղաքական և գիտական) դիտում էր որպես մեկ ներդաշնակ միասնություն։ Գիտությունը ռևոլյուցիոն ուժ է և պետք է ծառայի մարդկության երջանկությանը։ Գիտությունը, Մարքսի կարծիքով, կյանքը վերափոխելու, մարդուն բարձրացնելու հզոր միջոց պետք է լինի։ Հենց այդպիսի գիտություն է մարքսիզմը։

Մարքսը ստեղծեց այդ գիտությունը՝ ընդհանրացնելով պրոլետարիատի դասակարգային պայքարի բազմահարուստ փորձը և այդ տեսանկյունից ուսումնասիրելով այն ամենը, ինչ մարդկությունը հազարավոր տարիների ընթացքում ձեռք էր բերել պատմության, փիլիսոփայության, բնագիտության, քա-

դաքատնտեսության և այլ բնագավառներում։ Մարքսը այդ ուսումնասիրությունը սերտորեն կապեց բանվոր դասակարգի ազատագրական շարժման խնդիրների հետ։ Դեռ ուսանող ժամանակ Մարքսը ագահությամբ մշակում էր մարդկության ձեռք բերած գիտելիքները և ամենից առաջ պատմությունը, փիլիսոփայական թեորիաները, բնագիտության հայտնագործությունները։ Այսպիսով մարքսիզմը ստեղծվեց համաշխարհային քաղաքակրթության պատմական մեծ ճանապարհի վրա. նա եկավ պատասխան տալու այն հարցերին, որ հասարակության զարգացման ընթացքով դրվել էին մարդկության առաջ։ Մարքսը հատուկ ժամանակագրական ուսումնասիրություններ կատարեց, վերանայեց պատմական գիտության հայտնի փաստերը, հարստացրեց նոր փաստերով, տվեց պատմության նոր, գիտական-մատերիալիստական բացատրություն։ Մարքսը հեղաշրջում կատարեց վերոհիշյալ գիտություններից ամեն մեկի բնագավառում։ Մարքսիզմը ամբողջ նախընթաց կուլտուրայի օրինաչափ զարգացման և քննադատական վերամշակման արդյունք է։ Լենինը շատ անգամ է նշել, որ Մարքսի մեծությունն հենց այն է, որ նա ուշադրության արժանի ոչ մի գիտական փաստ կամ առաջավոր գաղափար դեն չնետեց և ոչ էլ մեխանիկորեն յուրացրեց։ Իր սուր մտքի քննադատական բովով անցկացնելով, Մարքսը քննադատաբար վերամշակեց փաստերի և գիտելիքների հսկայական պաշարը մի բարձրագույն սինթեզի մեջ, արմատական հեղաշրջում կատարելով փիլիսոփայության, պատմության, սոցիոլոգիայի, քաղաքատնտեսության, սոցիալիստական մտքի բնագավառներում։ Այս բոլորը նա դրեց և ձուլեց պրոլետարիատի դասակարգային պայքարի հնոցում։ Մարքսիզմ-լենինիզմի կլասիկները ըստ արժանվույն գնահատելով իրենց նախորդների ծառայությունը, միշտ էլ ընդգծել են իրենց հայացքների արմատական տարբերությունը գաղափարական նախորդների հայացքներից։ Եվ դա պարզ է. իր սոցիալիստական խնդիրներն իրագործելիս բանվոր դասակարգը չէր կարող մեխանիկորեն յուրացնել նախորդ գիտելիքները և հայացքները։ Նրան հարկավոր էր մի գիտություն, որը ավելի գիտական և ավելի մատերիալիստական պետք է լիներ, քան նախորդ առաջավոր հայացքները միասին վերցրած։

Այստեղից բխում են Մարքսի ուսմունքի, մարքսիզմի երևելի առանձնահատկությունները՝ վեհությունն ու ճշմարտացիությունը, գաղափարների բովանդակության հարստությունն ու ամբողջականությունը, գործուն և ռևոլյուցիոն ոգին, նրա մոբիլիզացնող, աշխարհափոխիչ ուժը։ Սխալ կլիներ կարծել, թե մարքսիզմը միայն փիլիսոփայական հայացքների սիստեմ է, կամ միայն պատմական կոնցեպցիա, կամ միայն տնտեսագիտական թեորիա, կամ միայն տակտիկական ու ծրագրային ուղղություն։ Այդ սահմանումներից և ոչ մեկը առանձին-առանձին վերցրած չի դրսևորում ամբողջ ճշմարտությունը։ Ճշմարտությունն այն է, որ մարքսիզմը արմատական հեղաշրջում կատարեց այդ բոլոր բնագավառներում. մարքսիզմն իրենից ներկայացնում է փիլիսոփայական, պատմա-փիլիսոփայական, տնտեսագիտական, ծրագրային ու տակտիկական սկզբունքների մի կուռ ամբողջություն, այնպիսի մի ամբողջություն, որը, Լենինի արտահայտությամբ, ասես մի կտոր պողպատից ձուլված լինի։ Մարքսիզմի գաղափարների այդ ամբողջականությունն ու հետևողականությունը ստիպված են եղել արձանագրել անգամ նրա շատ հակառակորդներ։ Մարքսիզմը նորագույն և բարձրագույն տիպի մատերիալիզմն է՝ դիալեկտիկական և պատմական մատերիալիզմը ու գիտական կոմունիզմը, այն նաև այդտեղից բխող ծրագրա-

յին, տակտիկական ու քաղաքական սկզբունքների մի սիստեմ է։ Մարքսիզմը հասարակական-քաղաքական և գաղափարական հոսանք է։ Դիալեկտիկական մատերիալիզմը, որն իր մեջ միացնում է մատերիալիստական թեորիան և դիալեկտիկական մեթոդը, մարքսիզմի բաղկացուցիչ մասն է և նրա փիլիսոփայական հիմքը։ Աշխարհի դիալեկտիկո-մատերիալիստական ըմբռնումը անցնում է մարքսիզմ-լենինիզմի միջով սկզբից մինչև վերջը։ Եվ իրոք, դիալեկտիկական մատերիալիզմի անմիջական շարունակությունն ու տարածումն է հասարակական կյանքի վրա պատմության մատերիալիստական ըմբռնումը՝ պատմական մատերիալիզմը։ Մարքսի քաղաքատնտեսությունը նույն դիալեկտիկական մատերիալիզմի սկզբունքների կոնկրետացումն է կապիտալիստական հասարակության ծագման, զարգացման ու կործանման օրենքների բնագավառում։ Դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմի և մարքսիստական քաղաքատնտեսության վրա է կառուցված գիտական կոմունիզմը։ Մարքսիզմի այդ թեորեական սկզբունքներով էլ հիմնավորված են մարքսիստական պարտիաների ծրագիրը, տակտիկան ու քաղաքականությունը։ Այսպիսով, ոչ միայն գաղափարական բովանդակության հարստությունն ու բազմակողմանիությունը, այլև սիստեմի ամբողջականությունն ու միասնականությունը, սկզբունքների հետևողականությունն ու ներդաշնակությունը թափանցում են մարքսիզմի մեջ՝ սկսած ամենափիլիսոփայական վերացական կատեգորիաներից մինչև ծրագրային ու տակտիկական պահանջները։ Մարքսիզմի հակառակորդներն ու թշնամիները, քննադատները մի անգամ չէ, որ փորձել են խախտել, գռեհկացնել մարքսիզմի այդ ամբողջականությունն ու հետևողականությունը։ Բայց այդ թշնամիները եկել ու գնացել են, իսկ մարքսիզմը շարունակ հաղթանակել է։

Թեորիայի և պրակտիկայի անխզելի կապը, անկասկած, ամենաէականն է մարքսիզմ-լենինիզմի համար։ Կերտելով իր հոյակապ ուսմունքը, Մարքսը նրա վրա նայում էր որպես աշխարհը կոմունիստորեն վերափոխելու հզոր ուժի։ Իր ուսմունքի այդ առանձնահատկությունը Մարքսը արտահայտել է հակիրճ, բայց բովանդակությամբ անսահման խորը մի աֆորիզմով. փիլիսոփաները այս ու այն կերպ միայն բացատրել են աշխարհը, իսկ խնդիրը նրա վերափոխման մեջ է։ Սա արմատապես նոր հայացք էր առաջավոր թեորիայի պատմական կոչման վերաբերյալ։ Վերջինս կոչված է ազատագրական շարժման հերոսներին տալու գործողության ծրագիր, հեռանկար, լոզունգ։

Մարքսիզմի այդ երևելի առանձնահատկության հետագա հիմնավորումն ու բազմակողմանի լուսաբանումը տվել է Վ. Ի. Լենինը, ընդգծելով մարքսիստական թեորիայի անխզելի կապը պատմական կենդանի շարժման, պրոլետարիատի, նրա պարտիայի անմիջական պրակտիկայի, քաղաքականության, տակտիկայի հետ։ «Մարքսի ուսմունքը մի անխզելի ամբողջության մեջ միավորել է դասակարգային պայքարի թեորիան ու պրակտիկան»։

Պատմական փորձը ցույց է տալիս, որ առանց այդ կողմի մարքսիզմը, ասում է Լենինը, վեր է ածվում բրենտանիզմի, ստրուվիզմի, զոմբարտիզմի։

Մարքսիզմն իր բուն էությամբ ստեղծագործական ուսմունք է։ Այն զարգացել է հասարակական-պատմական պրոցեսների, բանվոր դասակարգի դասակարգային պայքարի հետ սերտորեն կապակցված։ Մարքսիզմը կոչված է շարունակ պատասխան տալու պատմության կողմից պրոլետարիատի ու կոմունիստական պարտիաների առաջ դրված խնդիրներին։ Մարքսն ու Էնգելսը, իրենք շարունակ հարստացրել են իրենց ուսմունքը բոլոր մասերում պատմա-

կան մեծ իրադարձությունների փորձը հաշվի առնելով։ Մարքսիզմը վճռական պայքար է տարել երկու ճակատում և՝ ռևիզիոնիզմի, և՝ դոգմատիզմի դեմ։

«Մարքսիզմի պատմական զարգացման մի քանի առանձնահատկությունների մասին» հոդվածում Լենինը գրում է. «Մեր ուսմունքը,— ասում էր Էնգելսը իր մասին և իր հռչակավոր բարեկամի մասին,—դոգմա չէ, այլ գործողության ուղեցույց։ Այս կլասիկ դրույթի մեջ զարմանալի ուժով ու արտահայտությամբ ընդգծված է մարքսիզմի այն կողմը, որը ամեն քայլափոխում աչքաթող է արվում։ Իսկ աչքաթող անելով այդ՝ մարքսիզմը դարձնում ենք միակողմանի, այլանդակ, անկենդան, հանում ենք նրանից իր կենդանի հոգին, խարխլում նրա արմատական թեորիական հիմունքները՝ դիալեկտիկան, ուսմունքը համակողմանի ու հակասություններով լի պատմական զարգացման մասին. մենք կտրում ենք նրա կապը էպոխայի որոշ գործնական խնդիրների հետ, որոնք կարող են փոխվել պատմության յուրաքանչյուր նոր շրջադարձի հետ»։

Վճռականը մարքսիզմի մեջ, նրա ռևոլյուցիոն ոգին՝ մատերիալիստական դիալեկտիկան է, որն իր էությամբ ռևոլյուցիոն է և քննադատական։ Մարքսիստական դիալեկտիկայի հանճարեղ վարպետ Լենինը այսպես է բնորոշում դիալեկտիկայի տեղը Մարքսի ու Էնգելսի հայացքներում։ Խոսելով Մարքսի և Էնգելսի նամակագրության մասին, Լենինը գրում է. «Եթե փորձ աննենք մի խոսքով սահմանելու ամբողջ նամակագրության, այսպես ասած, կիզակետը,— այն կենտրոնակետը, որին հանդում է արտահայտվող և քննարկվող գաղափարների ամբողջ ցանցը, ապա այդ խոսքը կլինի դիալեկտիկական։ Մատերիալիստական դիալեկտիկայի կիրառումը ամբողջ քաղաքատնտեսության վերամշակման նկատմամբ սկսած նրա հիմքից—պատմության, բնագիտության, փիլիսոփայության, բանվոր դասակարգի քաղաքականության ու տակտիկայի նկատմամբ,— ահա ինչն է ամենից շատ հետաքրքրում Մարքսին ու Էնգելսին, ահա ինչի մեջ են նրանք մտցնում ամենից լականն ու ամենից նորը, ահա ինչումն է նրանց հանճարեղ առաջաքայլը ռևոլյուցիոն մտքի պատմության մեջ»։ Մատերիալիստական դիալեկտիկան որպես գիտություն և որպես մեթոդ մարդկային մտքի մեծագույն նվաճումն է, իմացության ամբողջ պատմության ընդհանրացումը։ Մարքսիստական դիալեկտիկան կլասիկների մոտ բնորոշվում է որպես օբյեկտիվ աշխարհի և մարդկային մտածողության շարժման ու զարգացման ընդհանուր օրենքների գիտություն։ Դիալեկտիկայի մշակումը Մարքսն ու Էնգելսը համարում էին նույնքան կարևոր գործ, որքան և իրենց հայացքների մատերիալիստական հիմքերի մշակումը։ Մարքսն ու Էնգելսը մատերիալիստական դիալեկտիկան համարում էին իրականության անալոգը, բովանդակությամբ հարուստ, բազմակողմանի, ճկուն մեթոդ, աշխարհը ճանաչելու և այն վերափոխելու մեթոդ, իմացության մեթոդ և գործողության մեթոդ։ Մարքսը մեծագույն դիալեկտիկ էր։ «Կապիտալը» հենց մարքսիստական դիալեկտիկայի փայլուն կիրառումն է տնտեսական զարգացման օրենքները ուսումնասիրելու բնագավառում։ Մարքսյան դիալեկտիկան պահանջում է նախ և առաջ օբյեկտիվ մոտեցում. այն թշնամի է սուբյեկտիվիզմին։ Օբյեկտիվ իրականությունը, փաստերի հարստությունը աշխարհի ճիշտ ճանաչողության առաջին նախադրյալն է։ Մարքսը փաստերի վիթխարի գիտակ էր։ Նրան, պատմում է Պ. Լաֆարգը, կարելի էր հարց տալ երբ ուզեք և ինչի մասին ուզեք, և նա միշտ տալիս էր հիմնավոր, փիլիսոփայորեն իմաստավորված պատասխան։ Նրա ուղեղը նման էր ռազմանավի, որը կազմ ու պատրաստ կանգնած է նա-

վահանգստում և կարող է շարժվել գիտելիքների օվկիանոսում ինչ ուղղությամբ ուզեք։

Մարքսը, սակայն, փաստերին ստրուկ չէր, այլ նրանց թագավորը. նա բացահայտում էր փաստերի կապակցությունները, օրինաչափությունները, թափանցում էր նրանց բուն էության մեջ, դեն գցում արտաքին քողը, վեր հանում երևույթների զարգացման ներքին աղբյուրը, ձևերը, ուղղությունն ու տենդենցները։ Դրան նա հասնում էր փաստերի ամենանրբին վերլուծումով։ Կապիտալիստական հասարակության այդպիսի վերլուծության վառ օրինակ է հանդիսանում «Կապիտալը», որը Մարքսի կյանքի գործն է և մի արկ է նետված բուրժուազիայի դեմ։ «Կապիտալի» քննադատները ամենաայլազան մեկնաբանումներ էին տալիս այնտեղ կիրառված մեթոդին, բայց այդ մեթոդի բուն էությունը նրանց համար մնաց յոթ կնիքով կնքված գիրք։ Ոմանք Մարքսի մեթոդը հանգեցնում էին այն բանին, թե այն անալիտիկական է, մյուսները՝ թե Մարքսի մեթոդը վերացական դեդուկտիվ է, երրորդները՝ թե այն զուտ ինդուկտիվ էմպիրիկական է և այլն և այլն։ Հասկանալի է, որ այդ սահմանումներից և ոչ մեկը չէր բացահայտում մատերիալիստական դիալեկտիկայի բուն էությունը, նրա իմացաբանական հարստությունը։ Այնուամենայնիվ հետաքրքրական է, որ մարքսիստական դիալեկտիկական մեթոդի ամենահաջող բնութագրությունը տրվեց Ռուսաստանում։ Մատերիալիստական դիալեկտիկայի հետագա փառավոր զարգացումը Լենինի գործերն են, որոնք հանդիսանում են անսպառ շտեմարան մատերիալիստական դիալեկտիկայի օրենքների, կատեգորիաների, տարրերի ուսումնասիրության համար։ Լենինը բացատրում է, որ մարքսիստական դիալեկտիկան դա հենց մատերիալիզմի տրամաբանությունն ու իմացաբանությունն է։ Մատերիալիստական դիալեկտիկայի վերաբերյալ Լենինյան ուսմունքը դիալեկտիկայի որպես գիտության բովանդակության խորը բացահայտման անզուգական օրինակ է։

Կիրառելով մատերիալիստական դիալեկտիկան պատմության նկատմամբ, հասարակական կյանքի զարգացման օրենքները բացահայտելու ուղղությամբ, Մարքսը արմատական հեղաշրջում կատարեց պատմա-փիլիսոփայության, սոցիոլոգիայի, պատմաբանության մեջ։ Սովետական պատմագիտության փայլուն նվաճումները մարքսիստական պատմափիլիսոփայության ճշտության և բեղմնավորության հիանալի ապացույց են։ Սուբյեկտիվիզմի, քաոսի ու կամայականության փոխարեն, ինչպես պատկերացնում էին հասարակական կյանքը բուրժուական սոցիոլոգները, հանդես եկավ պատմության զարմանալի ամբողջական, խորը ու ճշմարտացի բացատրությունը՝ պատմության մատերիալիստական ըմբռնումը. այստեղ հասարակական կյանքի օբյեկտիվ օրենքները, շարժիչ ուժերն ու զարգացման ուղղությունը ներկայացված են իրենց բազմակողմանիության ու հակասականության մեջ։ Միայն պատմական մատերիալիզմն է, որ կոմունիստական ու բանվորական պարտիաներին, ռևոլյուցիոն մարքսիստներին տալիս է կողմնորոշման ուժ, հեռանկարի պարզություն, սովորեցնում է նրանց ոչ միայն բացատրել անցյալը, այլև կանխատեսել ապագան և ոչ միայն կանխատեսել, այլև նվաճել այդ ապագան։ Այս վերջին մոմենտը հատկապես կարևոր է մարքսիստների համար։ Մարքսի և Էնգելսի կատարած հեղաշրջումը պատմական գիտությունների մեջ այն է, որ նրանք՝ 1. քաղաքական, իրավական, իդեոլոգիական հարաբերությունների հիմքում տեսան հասարակական նյութական հարաբերությունները՝ արտադրական հարաբերու-

թյունները, 2. այդ հարաբերությունները կապեցին արտադրողական ուժերի զարգացման հետ, ցույց տվեցին նրանց օբյեկտիվ դիալեկտիկան, 3. գիտակցորեն բնութագրեցին արտադրական հարաբերությունների պատմական տիպերը, մշակեցին պատմական մատերիալիզմի հիմնական կատեգորիան՝ հասարակական ֆորմացիաների գաղափարը և այդ ֆորմացիաների զարգացումը դիտեցին որպես բնապատմական պրոցես։ Այսպիսով, Մարքսը առաջինն էր, որ սոցիոլոգիան դարձրեց գիտություն, հնարավորություն տալով բազմահազար դեպքերի, անցքերի, իրադարձությունների հետևը տեսնել պատմական պրոցեսի օրինաչափ բնույթը։ Կոմունիստական պարտիաների ուժն հենց այն է, որ նրանք ամենից պարզ և ամենից խորն են տեսնում այդ օրինաչափությունը և դրան համապատասխան մշակում իրենց գործնական քաղաքականությունը, ծրագիրն ու տակտիկան, կանխատեսում ու նվաճում են ապագան։ Պ. Լաֆարգը շատ գեղեցիկ է նկարագրում մարքսիստական պատմա-փիլիսոփայության առաջացրած հեղաշրջումը. «Կարծես թե վարագույրը բացվեց իմ աչքերի առաջ. ես առաջին անգամ պարզ զգացի համաշխարհային պատմության տրամաբանությունը և կարող էի հասարակության զարգացման արտաքինից այնքան հակասական երևույթներն ու իդեաները հանգեցնել իրենց ընդհանուր նյութական պատճառներին։ Դրա ազդեցության տակ ես ուղղակի շշմել էի, և այդ տպավորությունն ինձ մոտ երկար տարիների ընթացքում մնացել է»։

Պատմության մատերիալիստական ըմբռնումը կազմելով պատմության իդեալիստական և մետաֆիզիկական ըմբռնումների ուղիղ հակադրությունը, հանդիսանում է գիտական կոմունիզմի անմիջական գիտական հիմքը։ Այդ հիմքից բխում է այն դրույթը, որ կոմունիզմը կամայական կամ պատահական երևույթ չէ, ինչպես փորձում են ներկայացնել կապիտալիզմի պաշտպանները։ Կոմունիզմը առաջանում է բնապատմական օրինաչափությամբ կապիտալիզմի ստեղծած տնտեսական ու սոցիալական նախադրյալների զարգացման հետևանքով, այսինքն, խոշոր արտադրության և բանվոր դասակարգի։ Դա՝ այդ պրոցեսը նույնքան օրինավոր և օբյեկտիվ անհրաժեշտություն է, ինչպիսի անհրաժեշտ օբյեկտիվությամբ իրար հաջորդել են նախորդ հասարակական ֆորմացիաները։ Սակայն չափազանց կարևոր և էական է այն, որ Մարքսը անդադրում բացատրում էր, որ կապիտալիզմից սոցիալիզմին անցնելու պրոցեսը չի կարող կատարվել արտադրողական ուժերի ավտոմատիկ գործողությամբ, ինչպես բանը պատկերացնում էին և պատկերացնում են ռևիզիոնիստները։ Պատմությունը ստեղծում են մարդիկ և հատկապես ժողովրդական մասսաները։ Առավել ևս, կոմունիզմի իրագործման համար պահանջվում է մասսաների հերոսական, գիտակից, կազմակերպված պայքար։ Մարքսն ու Էնգելսը շարունակ առաջնորդվել են այն համոզմունքով, որ մասսաներն են կերտում պատմությունը, նրանք են ստեղծում նյութական բարիքները, նրանց միջոցով են տեղի ունենում մեծ իրադարձությունները, նրանց աշխատանքն է հիմք ծառայում հոգևոր կուլտուրայի զարգացման համար։ Լենինը մարքսիստական պատմափիլիսոփայության ամենախոր և ամենակարևոր դրույթներից մեկը համարում էր և բազմիցս ընդգծում Մարքսի այն միտքը, թե որքան հիմնավոր է պատմական գործողությունը, այնքան մեծ է դրան մասնակցող մասսայի դերն ու նշանակությունը։ Մեր դարաշրջանը՝ կապիտալիզմից կոմունիզմին անցնելու դարաշրջանը, փայլուն կերպով ապացուցեց Մարքսի այդ դրույթի ճշտությունը։ Համաշխարհային-պատմական մեծագույն իրադարձություններ են

տեղի ունենում մեր աչքերի առջև։ Հոկտեմբերյան սոցիալիստական Մեծ ռևոլյուցիան Ռուսաստանի ժողովրդական մասսաների պատմական ստեղծագործության հետևանքը լինելով, իր հերթին քաղաքական ինքնուրույն գործունեության հանեց տասնյակ միլիոն և վերջին հաշվով հարյուրավոր միլիոն մարդկանց ոչ միայն Ռուսաստանում, այլև աշխարհի բոլոր ծայրերում՝ Եվրոպայում և Արևելքում, մետրոպոլիտներում և գաղութներում։ Ազատագրված սովետական ժողովուրդը չորս տասնյակ տարիների ընթացքում ոչնչացրեց կապիտալիզմը մեր երկրում, կառուցեց սոցիալիզմը, մեր երկիրը դարձրեց հզոր ինդուստրիալ—կոլխոզային տերություն, որը վճռական ներգործություն ունի համաշխարհային պատմության վրա։ Սովետական Միության Կոմունիստական պարտիան գլխավորեց, ոգեշնչեց, ուղղություն տվեց մասսաների այդ պատմական ստեղծագործությանը, մասսաներ, որոնք մեր երկրում այժմ կառուցում են կոմունիստական հասարակություն։ Կոմունիստական պարտիան, զինված մարքսիզմ-լենինիզմով, լուսավորում է կոմունիզմ կառուցող սովետական ժողովրդի մեծ ճանապարհը։ Իմպերիալիզմի գաղութային սիստեմը փլուզում է ապրում և դրա հիմնական պատճառն այն է, որ գաղութների բազմամիլիոն ժողովուրդները վճռական մարտի են դուրս եկել իմպերիալիզմի դեմ և մարտնչում են իրենց ազատագրության, իրենց երկրների ազատ զարգացման համար։ Ժողովուրդներն իրենց հերոսական գործունեությամբ նորից հաստատում են Մարքսի և Լենինի այն միտքը՝ թե ամենից բարձր պետք է դասել պրոլետարիատի, աշխատավորների պատմական ձեռներեցությունը։ Լենինը պահանջում էր պատմությունը դիտել այն մարդկանց դիրքերից, ովքեր կերտում են այն։ Մարքսիզմ-լենինիզմը աճել ու զարգացել է կապիտալիզմի բացահայտ ու քողարկված պաշտպանների դեմ մղված պայքարում, հատկապես զանազան գույնի ու կերպի օպորտունիստների, ռևիզիոնիստների, ինչպես և անարխիստական հայացքների ու տակտիկայի դեմ։ Օպորտունիստները վախենում էին մասսաների գործունեությունից, ինչպես սատանան թալիսմանից, վայնասուն բարձրացնելով այն մասին՝ թե չլինի ռևոլյուցիոն պրոլետարիատը, վրդովված մասսաները շատ ավելի հեռուն գնան, շատ ավելի բան խորտակեն, քան թույլատրելի է բուրժուական օրինականության տեսակետից։

Մինչդեռ մարքսիզմ-լենինիզմը սովորեցնում է, որ իսկական առաջնորդների թեորետիկների խնդիրն է գլխավորել մասսաների ձեռներեցությունը, կազմակերպել նրանց, տալ գործողության լոզունգներ, հերոսական մարտերի հանել։ Հասարակության կոմունիստական վերափոխությունը չի կարող իրագործվել ոչ միայն առանց մասսաների ակտիվ ստեղծագործության, այն չի իրագործվի նույնիսկ նրանց տարերային գործունեությամբ։ Այստեղ պահանջվում է դիտակցականություն և կազմակերպվածություն։ Առանց մասսաներին կազմակերպելու պրոլետարիատը ոչինչ է, ասում է Լենինը, իսկ կազմակերպված պրոլետարիատը ամեն ինչ է։ Ռևոլյուցիոն պրոլետարիատի այդպիսի կազմակերպություններ են հանդիսանում աշխարհի կոմունիստական և բանվորական պարտիաները, որոնք հզոր ուժ են կազմում։ Տվեք մեզ ռևոլյուցիոներների կազմակերպություն և մենք շուռ կտանք Ռուսաստանը, գրել է Լենինը Ռուսաստանի ռևոլյուցիոն շարժման արշալույսին։ Սովետական Միության Կոմունիստական պարտիան գլխավորեց մեր ժողովրդի գործած հրաշքները։ Մարքսն ու Էնգելսը ղեկավարելով կոմունիստների միության գործունեու-

թյունը, առաջին ինտերնացիոնալը, վճռական պայքար տարան մարքսիզմ-լենինիզմի բազմաթիվ թշնամիների՝ լիբերալիզմի, լասալականության, տրեդյունիոնիզմի, պրուդոնիզմի, բակունիզմի և այլ հոսանքների դեմ։

Իրենց աշխատանքով Մարքսն ու Էնգելսը հիմք դրեցին միջազգային բանվոր դասակարգի քաղաքական պարտիա ստեղծելու մեծ գործին։

Բարձր գիտականություն և համարձակ հեղափոխականություն, երևույթների օբյեկտիվ ընթացքի բազմակողմանի հաշվառում և աշխարհի վերափոխման վճռական կոչ, պատմության օրինաչափությունների ուսումնասիրություն և մասսաների ստեղծագործության նկատմամբ մեծ հավատ, ահա մարքսիզմի մի քանի առանձնահատկությունները։ Մարքսիզմի ուսմունքը ճշմարտացի է, ուստի և ամենահզոր։ Այդ ուսմունքը, նրանից բխող ծրագիրը իրենց հետագա զարգացումն ու մարմնացումն են գտել մեծ Լենինի գործերում, սոցիալիզմի համաշխարհային սիստեմում, կոմունիստական պարտիաների հերոսական պայքարում։ Ահա թե ինչու իմպերիալիզմի ջատագովներն ու պաշտպանները, ինչպես և ռևիզիոնիստները ամեն կերպ կեղծում են մարքսիզմ-լենինիզմը, փորձում նսեմացնել նրա հմայքը, թուլացնել նրա մոբիլիզացնող ուժը։

Ինչ միջոցներ ասես, որ չեն գործադրում նրանք, իմպերիալիզմի ռեակցիոն իդեոլոգներն ու քաղաքագետները մարքսիզմ-լենինիզմը վարկաբեկելու համար՝ սուտ, կեղծիք, զրպարտանք։ Բայց տեսեք թե ինչ ծուղակի մեջ են ընկնում նրանք. մի կողմից, մարքսիզմի շատ հակառակորդներ ստիպված են խոստովանել նրա հզորությունը, մասսաների մեջ նրա ազդեցության ավելի ու ավելի լայն տարածումը, խոստովանել, որ մարքսիզմը աշխատավորներին տալիս է ոգեշնչող իդեա, հեռանկար, հավատ իրենց ապագայի նկատմամբ և պայքարի մեջ վստահություն։ Կապիտալիզմն անընդունակ է, որևէ հմայիչ իդեալով ոգևորելու մարդկանց։ Մյուս կողմից նրանք փորձում են կասեցնել մարքսիզմ-լենինիզմի տարածումը, հակադրել նրան ինչ որ իդեալ։ Այդպիսի իդեալ որոնելով, իմպերիալիզմի գովերգուները վերջին տարիներում ներկում են կապիտալիզմի ֆասադը «ժողովրդական կապիտալիզմ» անվանելով, փոխելով նրա անունը, որպեսզի հմայիչ դարձնեն այն։ Կամ՝ քննադատելով մարքսիզմը, հակառակորդները նրա մասին անում են ամենահակասական, շփոթ, իրարամերժ դատողություններ։ Մարքսիզմ-լենինիզմի թշնամիներն շատ անգամ իրենք են իրենց մերկացնում այդպիսի դատողություններով։ Բայց ամենահիմնական մեթոդը մարքսիզմի կեղծման ու աղավաղման մեթոդն է։ Այդպես են վարվում նրանք մարքսիզմի ծագման հարցի հետ, այն հանգեցնելով կամ Հեգելի իդեալիստական դիալեկտիկային, կամ Ֆոյերբախի հայեցողական մատերիալիզմին, կամ՝ ուտոպիական սոցիալիզմին, կամ նույնիսկ քրիստոնեության ուսմունքին։ Այս մասին վերջերս շատ են գրում։ Փորձում են կեղծել, խախտել մարքսիզմի ամբողջականությունը, տնտեսական սկզբունքները հոսկաբերելով փիլիսոփայական սկզբունքներին, գիտական կոմունիզմի դատապարտները՝ դիալեկտիկական ու պատմական մատերիալիզմին, թեորիան՝ պրակտիկային, Մարքսին հակադրում են Էնգելսին, Լենինին՝ Մարքսին ու Էնգելսին։ Ատելանում են մարքսիզմի ստեղծագործական, հակադոգմատիկական բնույթը։ Եվ զավեշտականն այն է, որ իսկական դոգմատիկները կոմունիստներին մեղադրում են ռևիզիոնիզմի մեջ, իսկ ռևիզիոնիստները՝ դոգմատիզմի մեջ։ Հարավսլավիայի «Կոմունիստների միության» դեկավարները, օրինակ, անփառունակ խնդիր են վերցրել։ Նրանք հավակնում կերպով իրենց հռչակում

են որպես հավատարիմ մարքսիստ-լենինիստներ, իսկ կոմունիստական ու բանվորական պարտիաներին ներկայացնում են որպես ռևիզիոնիստներ և դոգմատիկներ։ Միջազգային կոմունիստական մամուլը բաղմակողմանի, հանգամանորեն ու հիմնավորված կերպով ցույց տվեց Հարավսլավիայի «Կոմունիստների միության» 7-րդ համագումարի կողմից ընդունված ծրագրի և համագումարի մի շարք որոշումների իսկական օպորտունիստական, ռևիզիոնիստական էությունը։ ԱՄՆ-ում, Անգլիայում, Արևմտյան Գերմանիայում, Ֆրանսիայում լույս տեսնող հակամարքսիստական գրականության մեջ մարքսիզմի հասցեին արվող քննադատության մակարդակը որոշելու համար բնորոշ են նաև հետևյալ դատողությունները. ոմանք մարքսիզմ-լենինիզմի մեջ տեսնում են տնտեսական ֆատալիզմ (այն հիման վրա, որ մարքսիզմ-լենինիզմը պահանջում է ռևոլյուցիոն պարտիաներից իրենց թեորիան, քաղաքականությունը, ծրագիրը հարմարեցնել հասարակական-տնտեսական զարգացման օբյեկտիվ օրինաչափություններին), մյուսներն, ընդհակառակը, կոմունիստների քաղաքականությունը համարում են ծայրահեղ սուբյեկտիվիստական, վոլյունտարիստական, ավանտյուրիստական (այն հիման վրա, որ կոմունիստական պարտիաները հսկայական նշանակություն են տալիս պատմության մեջ սուբյեկտիվ ֆակտորին՝ մասսաների, պարտիաների, ղեկավարների համարձակ, ձեռներեց, ռևոլյուցիոն գործունեությանը)։

Սակայն, այդ բոլորը բուրժուական և ռևիզիոնիստական իդեոլոգիայի անզորությունն են ապացուցում միայն։ Մարքսիզմ-լենինիզմը անպարտելի է, ամենահաղթ։ Մարքսը գիտության հսկա էր, իսկ նրա քննադատները՝ գաճաճներ։ Մարքսի ստեղծած ուսմունքը հաղթանակում և ստեղծագործաբար զարգանում է։ Մարքսիզմի զարգացման նորագույն էտապը լենինիզմն է։ Մարքսիզմ-լենինիզմի զարգացման գործը այժմ տանում են Լենինի աշակերտները, Կոմունիստական ու Բանվորական պարտիաները, նրանց ականավոր գործիչները։ ՍՄԿՊ XX համագումարի որոշումները, կոմունիստական և բանվորական պարտիայի ընդունած «Դեկլարացիան» ու «Մանիֆեստը» և այլ փաստաթղթեր մարքսիզմի ստեղծագործական զարգացման փայլուն օրինակներ են։ Մարքսիզմ-լենինիզմը անպարտելի է, այն նվաճել ու նվաճում է աշխարհի աշխատավորության հոծ մասսաներին, առաջավոր գործիչներին՝ հղելով նրանց դեպի պատմության մեծ պրոգրեսը, դեպի կոմունիզմ։